



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



391.99.092  
72-15

ԴԱ 36

3178

31.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՅԱՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԵՍՍԴԻ ՏԵԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Նույր Յովհաննէս եւ Կարապէտ Խալա-  
թեաններից՝ ի յիշատակ իրենց եղբօր՝ պրօք.  
Պրիզոր Խալաթեանի:

838.93082 7632

թ-15

Եղանակի  
Պայման Եղանակ

ԴԱ 14339 18/ԿԵԴՀ

3179

-6 NOV 2011

891-99-099

Р - 15

ՅՈՎՀԵՆՆԵՍ ԹԵՂԵԱՆԵԵՆ

Խ



# ԳՈՒՂԱԿ ՆԱՐԱՊԵՏԻ

ԵՐԳԵՐԸ

Հ 2001 թվականի օգոստի 1 ամիսի առաջնային օպերային համարը՝

(Արտակարգ ռեպրազ-էց)

100  
100  
100  
100  
100



ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Առաքելեանցի

1903

7 APR 2013

WOS VO

65801

ԱՐՄԵՆԻԱ ԲՈՒԺԱԿ

ԲՈՒԺԱԿ

Дозволено цензурою, Тифлисъ, 27-го Ноября 1902 г

ԻԻՐ ՑԱՐԴՅԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ

## Պ. ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆԻՆ

Ն Ո Ւ Ե Ր

Ա Հ Խ Ա Տ Ա Ս Ի Բ Ո Ղ Ի Գ

## ՔՈՒՅԱԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԸ

Ա.

Քուչակ նահապետը, նրա պարապմունքը և բնաւորութիւնը, քուչակ  
անունը, նահապետի թռոն թռո. Քուչակը:

Թէ ով է Քուչակ նահապետը — մեղ մանրամասնաբար  
տուտնի չէ: Մի ձեռագիր աւետարանի վերջում Արիստակէս  
վրդ. Տէր-Սարգսեան (Տելանց) գտել է հետեւալ գրութիւնը՝  
«Փառք ամենասուրբ Երրորդութեան... Քուչակ անուն բարի  
մտական, որ ստացող եղի սորան: Յիշեցէք զՔուչակն և միւս  
կենակիցն Թանգ-Խաթունն, Դարձեալ յիշեցէք զՔուչակն և  
մեծ պապն իւր նահապետ վարպետն, որ  
մականուն աշըդ Քուչակն իւր նահապետն, որ ստացող եղի սորան: Յիշեցէք զվեր-  
ջին ստացող սորա, որ ստացաւ ինալալ ընչից խրոց Քու-  
չակն. ի թուին Հայոց ՈՉԶ (կամ՝ փրկչական 1637)<sup>1)</sup>: Այս  
լիշտակարանից երկում է, որ այդ տողերի գրողն է նահա-  
պետի թռո Քուչակը, որը 1637 թուին իր պապ նահապետին  
«մեծ պապ» անունն է տալիս: Եթէ ընդունենք, որ Քուչակը  
«մեծ պապ» ասելով ուզում է ոչ թէ իր հօր կամ մօր հայրը  
այլ պապի պապը, կամ առ նուազն հօր պապը ասել, այն ժա.  
մանակ 1637 թուից չորս կամ հինգ սերունդ դէպի իւս գնա-  
լով կտեսնենք որ Քուչակ նահապետը ապրել է ՓԶ. դարի  
սկզբներում<sup>2)</sup>:

Երգիչ նահապետը ծնուել է Խառակոնիս կոչուած զիւ-  
դում, թէն ինքը իրեն վանեցի է անուանում: Այդ բազմահազ  
զիւզը գտնւում է Վասպուրականի Տուպ գաւառում, Արշակ  
լճի արեելեան ափին, Վան քաղաքին բաւական մօտ (8—10

<sup>1)</sup> Տելանց Հայերդ. եր. Ժբ.

<sup>2)</sup> Կոստանեան կ. Շնոր ժողովածուց, Ա. պրակ, երես 71.

ժամուայ ճանապարհով հեռու), և եղել է Նահապետի սեպհականութիւնը, ուր և թաղուած է ինքը, իր Քուչակի թոռան հետ Տեղացիք նորա գերեզմանը ուխտատեղի են դարձրել, և այս հանդամանքը ցուց է տալիս, որ Նահապետը ժամանակակիցներից շատ լարգուած մի մարդ է եղել ։ Ժամանակակիցները նրան «աշըզ Քուչակ» մականունն են տուել, իսկ նրա թոռը նրան վարպետ է կոչում. լամենախն դէպս երկու անուններից էլ երեւում է, որ Նահապետը թէ աշուղ երգիչ է եղել և թէ երգեր չինելու վարպետութիւնն է ունեցել.

Նահապետը իրեւ աշուղ անշուշտ մէկի մօտ աշակերտել է. հաւանականաբար որ ևէ վանքում, կամ ժամանակի նշանաւոր գրագէտներից մէկի մօտ սովորել է նա գրել-կարդալ. իսկ թէ ժամ մօտ, բնչպէս—այդ մասին հաստատ չգիտենք ոչինչ, Միայն նրա երգերից երեւում է (այն էլ եթէ ինքնուրուն են բոլորը), որ Քուչակը բնաւորութեան կողմից, հակառակ ժամանակի ոգուն, աւելի աշխարհիկ մարդ է եղել քան կրօնական. նա սիրել է այս աշխարհը, ունեցել է իր արտի եաբրո», որ իրեն միշտ զբաղեցրել է. Սակայն Քուչակը բաւական տեղեակ է եղել նաև ո. գրքին, որից դէպքեր և պատմութիւններ է վերցնում և իրեւ պատկերներ իր երգերի մէջ հիւսում. Երբեմն Քուչակ իր երգերում ներկայանում է իրեւ վարդապետով, խրաներ է կարդում իր ունկնդիրներին, աշխարհի շաբն ու սարին նոցա պարզում է. Տեղ տեղ երգի նիւթ է շինում գաւանաբանական զանազան խնդիրներ, որոնցից երեւում է որ աստուածաբանական ուսմունքին ես տեղեակ է Ալ և Քուչակին անծանօթ չէ ինչպէս ո. Գրքի աշխարհազրութիւնը, անպէս և իր ժամանակի նշանաւոր աշխարհը. նա գիտէ «Մօլքատ Խորասանի և Մըրի» տեղը. Նահապետի երգերը այն տպաւորութիւնն են թողնում ընթերցողի վրա, որ մարդ երգին երեակալում է ժամանակի հաւատացող, գիտուն, փորձառու մարդկանցից մէկը. Իր վիճակը երգելով, նա ցուց է տալիս թէ ինչպէս իրեն «ի մանկութենէ ի վեր կու մաշէ ուսման հոգն», որի պատճառով նա իրեն զերի է երեակալում. Նահապետը սիրում է գիտութիւն, սիրում է և այս աշխարհը. նա երկու ընկեր ունի «մէկն հողն է, մէկն հոգին». Երբ «հոգին» ալսինքն երկնաւոր կեանքը նրան «ի վեր է քաշում» ան ժամանակ «հողը», ալսինքն ալս աշխարհը որ «ժանդը է, ի վար կու հակէ». և ահա հոգուելով դէպի աշխարհի կողմը

Նահապետը բացականչում է. «Հետ հոգւոն, ամ, ով թուչի երբ նորա տունն հեռի է» (37 երես Տեղանց): Յետով Նահապետը միւս երգիչների պէս իրեն շատ ու շատ մեղաւոր է համարում և այդ «անհուն մեղաց ոչ ով պատճառ չէ եղեր, ալլոց ձեռօք չէ խարուեր» ալլ իր «սրտի ջօմար կամաւն լամենախն մեղքի է հանդիպեր» (37). Նոյն ալս միտքը մի ալլ տեղ ալսպէս է բերում.

Անըր ես ի աշխարհս եկի  
Գառն անպարտ ու մեղք շունէի,  
Մեծցալ ու մեղաւոր եղալ  
Ցիմ սոտքս ի մեղք գնացի» (32):

Ալսքանը միայն կարելի է իմանալ մեր երգչի մասին, իսկ թէ նա Բնչ գործունէութիւնն է ունեցել կամ թէ որ և է տեղ գնացել է իրեւ երգիչ աշուղ—չգիտենք. Յակոնի չէ մեզ նոյնպէս Նահապետի կեանքի զոնէ էական զծերը կամ թէ ինչպիսի աբտաքին է ունեցել. Միայն Քուչակ կամ Քուչա չաք (մի ալլ Ճեռագրի մէջ՝ Քօչակ) մականունից, որ տաճկերէն քիւչուկ բառն է, եղրակացնել կարելի է, որ նա կարծանասակ մի մարդ է եղել և չետոյ նրա այդ մականունը իրեւ լատուկ անուն դրել են նորա թուան վրաք. այդ մի սովորութիւնն է, որ մինչև ալսօր էլ կայ, որով նախորդների լիշտատակը նոր սերունդի միջոցաւ առ ժամանակ վառ է պահւում ցեղի մէջ.

Թոռ-Քուչակի մասին էլ ալսքանը միայն ասենք, որ «Ոիշեցէք զՅուչակն և միւս կենակիցն թանգսաթունն» բառերից կարելի է եղրակացնել, որ ալս թոռ-Քուչակը 1637 թուին արդէն ամուսնացած էր Թանգսաթուն անունով մէկի հետ, որի հետ և ապրում էր<sup>1)</sup>. Թէ որքան է ապրել սա—չգիտենք. գիտենք միայն, որ ապրել է թէ. դարում, իր երգերից մէկում նա զրում է հետեւալը.

«Ես Քուչակս եմ վանեցի  
և գեղէն Խառակոնիսակ,  
Լցեր եմ հարիւր տարին,  
Ել չի գար մտքիկս ի վերաւ» (Հայերդ 66 կր.)

<sup>1)</sup>) Եթէ միայն միւս ու բառը իր առաջին ամուսնութեան մասին մի մութ ակնարկ չէ:

Ալս տողերով գուցէ Թոռ-Քուչակը իր ծերութիւնն է ակնարկում և ոչ թէ իրօք հարիւր տարեկան լինելն է ասում, որովհետև դժուար թէ մի հարիւր տարեկան մարդ, որ ուրեմն զգում է իր կենաց վերջին օրերը, ոգեսրուած «երթայ Երուսաղմբ» տռնի» կամ «շուռ տալ շահաստան» կամ «ենի Խորասան և իջնի լէջմիածին» (65, 66): Այսպիսի տողեր միան քիչ շատ ջանիլ, այն էլ ոգեսրուած և երեակալող երգիչը միան կարող է շարադրել և ոչ թէ մի մարդ, որ «հարիւր տարին լցեր է և մտքիկն էլ չի գար ի վերալ»<sup>1)</sup>:

Ալս Թոռ-Քուչակն էլ երգիչ է եղել, սակայն սրա երգերից քիչ է լաւանի: Համեմատաբար աւելի շատ երգեր են մնացել պապ-Քուչակից, «րոնց բոլորին Յաղագս Հոգւոյ և սիրոյ ոտանաւոր է բանս» ընդհանուր վերնադիրն է տալիս Խառակոնիսցի Նահապետը:

## Բ.

Նահապետի գաղափարները և զգացմունքները. կնոջ սէրը նրա երգերում և նրա եարի. ս. գրքից արած պատմութիւնները. Նահապետի խրատները. Ժամանակակից կեանքի նկարագրի բացակայութիւնը  
Նահապետի երգերում:

Նահապետի երգերում, ինչպէս և ցոյց է տալիս ընդհանուր վերնադիրը, մնօ տեղ պիտի բռնէին «Հոգւոյ և սիրոյ վերաբերեալ երգերը. և այդպէս էլ է, սակայն «աիրոյ երգերը քանակով աւելի շատ են»: Իր այդ սիրոյ երգերում Նահապետը երգում է մի սիրահարուած երթասարդի պէս իր «եարը», որ գրեթէ մինչն վերջը նրա համար անմատչելի մի բան է մնում: Երգիչ համար պարզ չէ թէ երբ սկսուեց իր մէջ այդ սիրոյ զգացումը կամ թէ ինչպէս լառաջացաւ ալդ: Այսքանը միան գիտէ, որ ինքը «անմեղ կանգնած» էր և նրա սէրը «զէտ նետի չարիէն ելաւ ու եկաւ իր սիրոց գամուեցաւ»: Ինչ և իցէ, նրա համար անբացարելի կերպով ծնունդ է առնում նրա

<sup>1)</sup> Իսկ թէ այդ տողերը Թոռ-Քուչակինն են և ոչ Պապ-Քուչակինը, տես Հայերգ, եր. ժբ. (Նախերգում):

մէջ սիրոյ զգացումը և այնուհետև նա ամբողջ սրտով նուիրում է իր եարի գովասանքին:

Նրա եարը «ապեր է գոյնզգոյն կապակ, կոճակ շարեր, որի օղակն է կանանչ» և իր եարի ալդ երփներանդ չորերից հիացած բացականչում է՝ «մտիկ իմ եարին արէք, զինչ հագեր ամենն է կանանչ»: Այդ կանաչ շորերով եարը, որ անման» է և «մալրն չէ բերեր նրան նման», ունի «սիրուն երես, որ լուսին ի մօտն է զերի, թուխ աչք ու կամար ունքեր, որ քան զծովն կու զարնէ ալի» (43 եր.), այլ և «ալիքի նման վարսեր ունի, որ քամին կանէ տարութեր», ուոփ ծառից աւելի հասակ ունի և ամբողջութեամբ «քան զկարմիր խնձոր բոլորեր» է: Այսպիսի մի գեղեցիկ եարի սիրով թափառում է երգիչը և հանդիպած զետակին դիմելով իր սիրտն էլ նորա մօտ է բաց անում, նրան էլ իրեն պէս սիրահարուած է երեակայում որ զժուածի պէս օր ու գիշեր գէպի «օտար աշխարհ» է գնում իր եարին հասնելու: Այս զետակի պէս ինքը երգիչը ևս ճանապարհ է ընկնում զէպի իր եարի տունը: Նա առնում է «փարջիկ մը անուշ զինի» ու «խօշեարի դուռն է գնում», կանչում է «խօշեարում զդուռն բաց, ձիւն եկեր ոտփիս կու մըսի», բաց գուռը չի բացւում: Երգիչը հասկանում է, որ իր եարից իրեն զատողը նրա մալրն է, ուստի երգում է.

«Արակն ի էրկնից ի վայր թող  
Զքո մալրն ամէն էրէ,  
Որ զիս ի քէն իզատ,  
Զքեղ վանէ օտար կու պահէ» (35.):

Այսպէս երգիչը չաեսնելով իր եարին հիւանդանում է, աղեղնում, խնկի նման» է զառնում ու «զափրանի» գոյն ստանում և հաստատ իմանալով որ զեռ մահուան օրը չի եկել այլ իր եարի սիրուցն է հիւանդացել, թուղթ է զրում կամ սբարձրագնաց լուսնի» միջոցաւ բարեկ է ուղարկում իր եարին ասելով թէ:

«Առ ինձոր արեկ զիս ի տես  
Զիմ ցաւուն զեղն զու գիտես  
Ինձ օտար է քիմ չի բերես» (28.):

Այնուամենախիւ եարը իւր սովորութեան համաձայն միշտ խարում է երգին և երգիչը շատ համբերելուց լետոյ ալս անգամ էլ բարկանում է ասելով՝

աբանի կենամ քեզ ապով,  
Քանի մէկ էրիմ կրակով.,.  
Կշտացեր եմ սուտ խաբելով.  
Թէ չես սիրեր ըդորդ սրտով,  
Սուրբ-Սարգիս, Աստուած քեզ խռով։

Սական Քուչակ Նահապետը ալսքանով չի բաւականանաւում, նա շարունակ մէկը միւսից գեղեցիկ պատկերներով երգում է իր սէրը և եթէ ընթերցողը կամ ունկնդիրը այս կերպ չի հասկացել նրա սիրով, զգացմունքը, աշխատում է մի այլ աւելի գեղեցիկ և պարզ պատկերով լայտնել նոյնը։ Եւ ահա նա դիմում է ծաղիկների մի խմբի, որոնց միջից ընտրում է վարդին, որովհետեւ սա իր եարին նման է, նա այդ վարդին պահում պահպանում է իր աչքի լուսի պէս, չի թողնում նոյն իսկ որ այդ վարդը օտար ջրով ջրուի, որ մի գուցէ չորսանալ, այլ իր «աչքից առու է հանում», և իր արտասուքի առուակով նրա արմատներն է ջրում, որ «պահառանար» (44)։ Եւ երգիչը իր այդ վարդ-եարին «Էմանէթ» է տալիս իր հաւատարիմներին, որ վարդի մէջ պահեն միշտ, ինքը օտարութեան է զնում և պատուիրում։

«Թէ երթամ ու շուտով դառնամ  
Զամանաթըս ի տէր հասուցէք.  
Թէ երթամ խարիպուկ մեռնեմ.  
Վարդն ձեզ, զտէրն լիշեցէք» (30)։

Այդ օտարութեան մէջ նա մի գերի է երեսկարում իրեն, որ միանակ մնալով օրերը լալով է անցնում և վախենալով թէ մի գուցէ շատ լաց լինելուց աչքերից զրկուի, մարդ է ուղարկում եարի մօտ ասելու թէ՝

«Լսեր եմ որ վարդ ունիս, γ  
Ուզարկի տէսաէ մի գերուս.  
Պազնեմ աչերուս դնեմ  
Որ դազրի աչերս ի լալուս» (40)։

Մի ուրիշ անգամ երգիչը սկսում է զանազան նմանութիւններով իր և իր եարի ինչ լինելը պարզել. ալսպէս օրինակ, նրա եարը մի մատանի է, իսկ ինքը երգիչը այդ մատանու անբաժան ակն. կամ ուր «պազ աղբեւր մի կար եարը արդ աղբիւրի մօտի կանանչն» է, իսկ ինքը ցողն ի վերաբանարը մի խնձոր է ծառի ճղին իսկ ինքը «կանանչ» թիկկ ի

վերալու։ թող փորձէ մէկը քաղել այդ խնձորը և ահա կչորանակ թէ թուփը և թէ ամեն ինչ Ազգալսի եարին սիրող երգչի սիրտը համակուած է մի անհուն, մեծ սիրով, և այդ սէրը իր անհունութեամբ դանուում է մի «անկատակ ծովի» մէջ, ուր «քեափիր ալին է պահապան»։ երգիչը լոզում է այդ անհուն ծովում և շատ աել ու մուտք անում, որպէս զի «սիրոյն տիրանալ» կարողանալի. այդ սիրուն, որ «աշխարհ զալով եկաւ նրա սիրտը թառեցաւ, հապա իր սրտէն ի զուրս ելաւ էրկերէ լիրկիր թափեցաւ» ապա եկաւ նորա «զուխը ելաւ և լզեղն ելաւ թառեցաւ, աչիցն արտասուք ուզեց, —նա արիւն ի վար վաթեցաւ» (33), Բայց երբ պատահում է, որ իր եարին որ և է կերպով ձեռք է բերում, այդ զէպքում, քանի որ եարը իրմօտն է, նրան ժամանակը թուում է զարուն, «կանաչ ու ցողն ի վերալու, բայց երբ եարը հեռանում է, կարծես արդէն ձմեռէ, «ձիւն եկեր եղենն ի վերալու»։ Նրա եարը իր մօտն է և ահա նա ուզում է որ զիշերը երկարանալ և եթէ հնար է, մի տարի դառնալ։

«Իմ եարն ինձի հիւր եկեր,  
Առաւօտ, գու ի զատ կեցիր,  
Որ զմեր խաղն կաւիրես. Ճ  
Գաս զլուս ի վերալ բերես,  
Զիս իմ եարէն բաժանես» (29)։

Երդչի երջանկութեանը գրեթէ չափ չկա է, նա պատկերով ներկալացնում է իր անցեալ վիճակը թէ ինչպէս իր սիրտը մի կաթսալ էր մինչեւ ալժմ, որի մէջ եփում էր եարի աղուսանու, իր «անձիկը չոր փալտ էր եղեր ու զկրակն ի վառկու պահէր», սական եթէ միսր եփելուց էստու կրակը դադրեցնում են, իսկ իր սրտի կաթսալում թէւ «թողեր է միսն զիւր ուկորն» բայց և այնպէս «զեռ ի կրակն փալտ կու ձըդէր», —մինչեւ հիմա այս զրութեան մէջ էր և ալժմ որ պիտի միսիթարուէր և իրը փալտ՝ վառուելուց առ ժամանակ ազատ մնար-կրկին նրան չի լաջողում եարին մօտենալ, զարձեալ անմիթար է մնում, իր այս վիճակը ինքը երգիչն էլ չի հասկանում, մի անորոշ, տարտամ վիճակ է, կարծես անմատչելի մի բանի է ձգուում և այդ անհանու զրութիւնից ելնելու համար վերջապէս զիմում է եարին և կէս՝ խնդրքի ու կէս՝ պահանջի ձկով ասում է, «կամ առ զիս ի ծագ ի քու» լամ տէսթուր առոր երթամ ի տունու։

Եւ երբ անողոք եարը ոչ տին է անում և ոչ էլ միւսը,  
այլ ասում է որ «հանցեղ երերուն» (պիտի) պահեմ մինչ որ  
դու լուսն առաւօսուն» (43)—երգիչն ալ ևս դիմանալ չի կա-  
ռողանում և անիծում է եարին հետեւալ ձեռվ.

«Ես մեռնեմ ի քո վերայ  
Դու զքո ծամդ կտրես,  
Ատրես մաշալայ վառես  
Զեռքդ առնուս ու դիս փնտռես...»

Գաս իմ հողակուտի վրալից անցնես, տեսնես խղճուկիս  
շիրիմը, աչքերդ լցուին լորդահոս արցունքով, վզիս փարել  
կամենաս, բայց փոխարէնը «ապառաժ վէմս» գրկես ու համ-  
բուրես (44):

Մի ուրիշ տեղ Քուչակը երանում է այն քաջին, «որ  
առեր իւր եարն է փախեր, ոնց որ զկամուրջն անցեր, ջուրն  
էլեր զկամուրջն է տարեր և ձնիկ, եղեմիկ եկեր, զոտվնուն  
հետքն է կորուսեր» (27): Բայց ինքն էլ վերջապէս ալս ան-  
ցաւոր աշխարհից զգւում է և համոզում է եարին որ միասին  
«լայն աշխարհն» գնան, այն աշխարհում մնան, անվախ ու  
ապահով ապրեն և շման ալս աշխարհի վրայ ու շարունակ  
«դողան թէ ինչ կու լինի»:

Ազաքան, և դեռ աւելի շատ ձեռովլ նահապետը երգում  
է իր եարին որպէս մր սիրու առարկայ միախն. նրա երգերից  
երեսում է որ նրա եարը միախն մարմին ունի առանց հոգու և  
առւանց ներքին զեղեցկութեան: թէ ունի արդիօք նահապետը  
ուրիշ երգեր ևս որոնց մէջ երգած լինի իր եարի ալդ ներքին  
զեղեցկութիւնն ևս—ալդ լատանի չէ, թէն հաւանական է. բայց  
մեր ձեռքը հասածներից ալդախի բան չի երեսում: Սակայն  
Քուչակը միշտ էլ իր եարով չի զբազում: Որքան էլ աշխար-  
հիկ երգիչ լինէր նա, անուամենախիւ իր ժամանակի ոգու  
ծնունդ էր, ուստի և նրա երգի նիւթ է զառնում երբեմն կրօ-  
նական բովանդակութեամբ պատմութիւններ, ո. գրքից զա-  
նազան դէպքեր: Ալսպէս օր. նա փառաբանում է Աստուծոյ  
անունն:

«Որ զբարեաց դուիխն է բացեր  
Զաշխարհս զեղեցիկ ստեղծեր  
Եւ երեք դիմաց բաժաներ  
Զէրեշտակս ի բերկինս զւեր  
Աղամայ զըրախտն տուեր

Զերկիրս անասնոց տըզեր

Անբանից տեղիք զսա շիներ» (31):

Օրհնում է Աստուծոյ ստեղծագործութիւնը որովհետեւ  
Աստուծած երբ զաշխարհս արար

Զհողն զջուրն, զքամին հրով

Սթիւալ մ' աւելի չարաւ

Կշուց զամէնն չափով» (32):

Մի ալ տեղ պատմում է Աղամի զրախտից արտաքսուիլը,  
որի պատճառը օձից խաբուելով թղենու պառող ուտելն էր,  
երգում է թէ ինչպէս Գարբիէլ հրեշտակը իջաւ. երկնքից և  
աւետեց կուսին նրա «Հնորհօք լշանալու» մասին, թէ ինչպէս  
«փ հօրէ առաքեալ բանն ծնաւ մարմնով ի կուսէն և կիրք  
կուսին ոչ խախտեցաւ», և թէ ինչպէս ո. կուսի «անձն լցեալ  
չնորհօք ի տէր ցնծացաւ և հոգին ի փրկիչն Աստուծած» (30):  
Ազան նա շարունակում է պատմել Քրիստոսի ծնունդը այրի  
մէջ և իւտոյ ինքն էլ միանալով «փառք ի բարձունս» երգող  
հրեշտակների հետ, օրհնում է այն «մեծ լոյսի» ծնունդը, որ  
«ի լարվոյն հատեալ առ կոյսն լալրն ծագեցաւ» (30—31):  
Ուրիշ տեղերում Քուչակը երգի նիւթ է շինում Քրիստոսի խաչի  
վրայ բարձրանալը, կամ ո. գրքից բերած օրինակներով խրա-  
տում է լսողին որ եթէ ճռւհար ունի ի խաղան առջն չը  
վաթէ», ալ աշխատէ Աստուծոյ ունեցած հացից ձեռք բերել  
և նորա «կենաց աղբերէն ջուր ըմպել» որ «անմահ միւսօցէ»:

Սակայն Քուչակ նահապետը ո. գրքից քաղած խրատնե-  
րից զատ ունի և իր սեպհական խրատները, որ բաւական մօ-  
տենում են ալժմեան մեր մողովզական մի քանի խրատական  
առակաւոր գարձուածներին: Իր խրատների մէջ Քուչակը գըլ-  
խաւոր ուշագրութիւն զարձնում է տգիտառթեան վրայ: Նա  
նամանեցնում է միտքը մի նաւազարի, որ բարձեր է իր նաւին  
շատ «շահաւոր գանձեր» և աշխատում է ծովի ափը հասնելը  
և սումը մի լոյս է, որ վառուելով տգէտի հոգում, լուսաւորում  
է նրան մթութեան մէջ: ուստի խրատում է միշտ «սիրով ուս-  
ման ջանալ»: Նոյնպէս խրատում է, որ մարդիկ դատարկ  
գլխով «բարձրագնաց» չլինին, ալ ընդհակառակը պտղով  
ծանրաբեռնուած ճիւղի պէս խոնարհ լինին: Երգիչը ասում է  
որ առհասարակ պէտք է խրատել նրան միախն, ով խօսք է  
լսում: ալդպիսի մարդու հետ՝ հարկաւոր է ընկերանալ և ցուց  
տալ, որ «անշահ, անօգուտ բան ու մեղագրանք է քուֆը ա-

սելն», որ մարդ «զալոց մեղքն քննելու» փոխարէն՝ «երկար մտօք» իրեն պիտի քննէ և «զմանուն օրը միշտ լիշէ» (32,36, 37): Երբէք բարեկամութիւնն մի արա այն մարդու հետ, որ քո գնալուց լեռով քեզ բամբառում է: Ալդպիսի շրջապատի մէջ դու պիտի հաւատաս միայն քո բաղուկին:

«Փանի բաղուկի ի բան կենալ  
նատ եղբար ու շատ սիրելի.  
Բաղուկի ի բանէ ընկնի,  
Ոչ եղբար և ոչ սիրել» (35):

Եւ լեռով երգիչ Նահապետը օրհնում է իր խրատները պահողին և ազօթում որ նա «զանանց բարին վալելէ»:

Բացի սոցանից Քուչակ Նահապետի երգերում գտնում ենք և միջնադարեան առակների և անէծքների օրինակներ ևս: Օր. համար, նա մի տեղ անիծում է նրան, «ով որ սիրոց տէր մարդուն չողորմի»: այդ անողորմ մարդը «թող մեռնի,

իր ման ի մորին լինի  
Զիր բերնին հաղորդ չգտնուի.  
Աղուէսն իւր լալկան լինի,  
Գալլ ու ազուան իւր հաբեղանի,  
Նունն ալ իւր մատաղ լինի  
Ու ագին զէտ մոմ թող վառի» (33):

Մի ուրիշ տեղ Նահապետը ալս կերպ երգի նիւթ է շինում երեք զանազան առակներ, որոնց նիւթն է առիւծի, շահէնի և կաքաւի որոշ, եղնիկի եղջիւրը և գետնին կււտ չուտող հաւը:

Ոհա, գրեթէ, սոքա են կազմում Քուչակ Նահապետի քնարի բովանդակութիւնը և իր գաղափարները տեսանք թէ ինչպէս է երգում: Բայց հարց կարող է ծագել թէ՝ հապա ինչ է երգում Նահապետը իր ժամանակակից կեանքից: Այս հարցին, դժբաղդաբար դրական պատասխան տալ չենք կարող: Իր ժամանակակից կեանք նրա երգերում գրեթէ մի տողի տեղ անգամ չի գտել: Կա ապրում էր Ֆջ. դարում, անպիսի մի ժամանակ, երբ Պարսից ու Օսմանցոց կոիները շալոց երկրում անպակաս էին: Սէլիմ-Սուլթանը և Շահ-Խսմահէլը իրենց կուներով աւերեցին Հալաստանը մինչև 1515 թիւը, Զալլըրանի դաշնագրութիւնը, սակայն դրանից լեռ երկիրը խաղաղ չէր: Շարունակ հալածանք, կեանքի անապահովութիւն և այդ բաւական: չէր, վրակ հասաւ 1517-ին Սէլիմ-Սուլթանի և

1543-ին Սուլէման Սուլթանի անագորովն հրամաններ—հաւաքել ամեն կերպ քրիստոնեալ մանուկներ և Պօլիս ուղարկել—ընդդիմացող մալբերը զլսատում էին և երկրի իրարանցումն ընդհանուր էր: Քիչ լետով Թահմաղ Ա. արշաւում է Հալաստան և իր ասպատակութիւններով ընդհարւում է Սուլէման Սուլթանի հետ, և այս երկուսի կոիների մշտական հետեւանքն էր ժողովրդի կամովին գաղթը կամ փախուստը, կամ լաճախ մոլեռանդ միասեանների ձեռքով կատարուած գերեգարութիւնները: Ահա ալսպիսի մի ժամանակ է ապրել մեր Քուչակ Նահապետը և միանդամայն զարմանալի է մնում մեզ համար թէ ինչպէս է, որ ալսպիսի հանգամանքերի մէջ ապրող երգիչը անազին կտորներ է նուիրում իր երգերի մէջ իր եարի գովասանքին, բայց մի քանի խօսքով, գէթ մի անցողակի ակնարկութիւն անդամ չի անում իր ժամանակի զառն վիճակի վրաէ, որի մէջ ինքն ապրել է, հետեւապէս և ամեն վալրկեան այդ վիճակի զառնութիւնը զդացիլ: Սակայն, գուցէ, Նահապետը ալտպիսի բովանդակութեամբ երգեր գրել է բայց մեր ձեռքը չեն հասել: Այդ հաւանական է, բայց առաջմ մեզ հասածներից ալտպիսի բան չենք տեսնում: Երկու տեղ միայն Քուչակի երգերում զառն վիճակի արտակարութեան տողեր ենք դանում, սակայն պիտի ստիպուած լինենք ալդ մի քանի տողերը խիստ ալլաբանութեամբ բացատրել, որ կարողանանք ասել թէ գրանով իր ժամանակի մասին ակնարկութիւն է անում: Ալսպէս օր. երգիչը մի տեղ սարսափելի բան է ներկալացնում «մարդոյ շառը», զրպարտութիւնը, և այդ «շառն ալնչափ չար է, որ գաղանն իրմէն կու վախէ» (35): Մի ուրիշ տեղ երգիչը ներկալացնում է հաւի «ողորմ ու լալի» վիճակը, որ «ոչ զիշերը քուն ունի և ոչ ցերեկն ի վարկու կանգնի», ալլ միայն «մէկ պահ մի դաղար ունի» և ալդ էլ ալն ժամանակ, երբ «լոտիցն ի վար կու կախուի» և երկու կաթ արիւն» թափելով աչքերը «կու թռչի» (36): Զուր կլինէր լնդունել թէ ալս օրինակներով երգիչը իր ժամանակն է ակնարկում, որովհետեւ առաջին՝ Քուչակի պէս մանրամասնութիւններ սիրող մէկը իր ժամանակակից կեանքի մասին զաղափար տալու համար թէ բաւականանար մութ, այն ևս հեռաւոր ալլաբանական ակնարկիներով, և երկրորդ ոչ միայն «մարդոյ շառը» կամ «հաւը», ալլ և շատ լաճախ երգիչները ալնպիսի բաներ են իրենց երգի նիւթ շինում որ:

կարծես միայն ժամանակ անցնելու համար են գրել, օրինակ մէկը գովում է իւր հայրենիքի հարիսան, միաւը հիանում է իր չախուի (դանակի) վրայ, մի ուրիշը գովում է իր թաշկինակը, չորրորդը գանգատուում է իրեն անհանգիստ անող ճանճերից և ալին<sup>1)</sup>: Հետեապէս և նահապէտի այս տողերը մարդու շառի և հաւի մասին ուրիշ ոչինչ չեն, բայց թէ իսկապէս հաւի վիճակի վրայ խղճահարութիւն և մարդու շառի վրայ զզուանք:

## Գ.

Պապ-Քուչակի և Թոռ-Քուչակի միւս երգերը.—Նահապէտի երգերի գեղարտեստական կաղմութիւնը.—Լեզուն և ոճը.—Բանաստեղծական պատկերները:—Նահապէտի լեզուն յառուկ բառերը.—Հայերէն ու Անտոնի կոչուած տաղաչափութիւնը և նահապէտի երգերի չափը:

Նահապէտի երգերը հրատարակել է Արիստակէս վ. Տեկանց իւր «Հայերգում», հանելով 1593 թուին օրինակուած մի զրչագրից: Թէ արդեօք ուրիշ երգեր էլ ունի նահապէտը ինձ չայտնի չէ, միայն պ. կոստանեան իւր «Նոր ժողովածուի» Ա. պրակում գնում է մի երգ «տաղ զեղեցիկ և ազնիւ» վերնագրով, որը նա հանում է 1695 թուին զրած մի տաղարանից և որի հեղինակը թէ չի լիշուում, բայց անկասկած մեր Քուչակն է, որովհետև ոչ միայն լեզուն և պատկերները նոյն են բոլորովին Հայերգում եղած նահապէտի երգերի հետ, ալլ և վեց (աստղանիշ) տներ գրեթէ բառացի նոյն են Հայերգում եղած Քուչակի երգերի զանազան կտորների հետ: Ալս երգի մէջ աւելի նոր բան չկայ և եթէ մի երկու բան էլ այստեղ նոր են, պատճառը նոյն բանի ալլ կերպ երգելն է, որ նկատելու էլ առանձին արժէք չունին:

Հայերգում բերած է և Թոռ-Քուչակի մի երգը որի մէջ նա միայն մի «գուղալի» է գովում իւր մանրամասնութեամբ (Հայերգ երես 63): Թոռ-Քուչակի ալս երգը, ինչպէս Հ. Տեկանցն էլ նկատում է իր զրբի լառաջաբանում, «ալլք անանուն սարկաւագի մը կուտանու: Եւ լիրաւի ալս երգի պէս մի երգ կալ Քնար-Հայկականի 167 երեսում, որի տները, երբեմն էլ միայն տողերը նման են Հայերգում եղած Թոռ-Քուչակի

<sup>1)</sup> Կոստանեան, նոր ժողովածու 1. եր. Գ.

երգի հետ: Թէ Քնար-Հայկականի մէջ եղած վարիանտի մէջ ասուած է՝ «սարկաւագ ասող բանիս»... և ալլն, բայց այդ չի խանդարում, որ Հայերգի մէջ եղած երգը ապահովութեամբ Թոռ-Քուչակին վերագրենք, որովհետև սարկաւագի վարիանտը նախ աւելի կարճ է քան Թոռ-Քուչակինը և երկրորդ այդ երգու վարիանտները ուշի ուշով համեմատողը հեշտութեամբ կտեսնի որ սարկաւագի վարիանտը մի քանի քան ո՞ւթիւն է միայն Թոռ-Քուչակի վարիանտից (և թէ միայն իրօք եղել է մի ալլպահի սարկաւագ երգիչ և սարկաւագ անունը Քնար-Հայկականի վարիանտի մէջ պատահականութեան մի գործ կամ գրչագիրների եղծումների արգասիք չէ): Կար նաև մի ալլ երգ, ուր գովասանքի առարկայ է սուրբ Կոյսը, որին և իբրև բարեխօսի գիմում է երգիչը<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Այս երգը ես վերագրում եմ Թոռ-Քուչակին, նրա միւս երգի հետ ունեցած լեզուի, ոճի և ընդհանուր բնաւորութեան կողմից ունեցած նմանութեան վրայ լենուելով, և ոչ մի տեղ տպուած չլինելուն համար զնում եմ այստեղ իբր ծանօթութիւն միայն, հանելով Ս. Էջմիածնի մատենադարանի № 1640 ձեռագրի 121-րդ երեսից:

Գովասանք սուրբ աստուածածնին.

Ի վանեցի քօչակէ ասացեալ.

Աղբիւր կենդանի բըզում զանազան  
Մեղա քեզ մեղա կուս անապական  
Գլուխ կոսանաց զասուցն պարծան  
Մեղա քեզ մեղա.

Երեսիդ փափագ զօրքըն վերնական  
Էրանեալ ընտիր թալբուհի անմահ  
Ժառանող զըախտին և արքալութեան  
Ակա.

Ի փառս լուսով խորհուրդ հիացման (ց)  
Ծընօղ կենդանի Յիսուսի իջման  
Կամաւոր բաժակ ձեռքս փրկութեան  
Մեղ.

Ղամպար ճշմարիտ մեծ ուրախութեան  
Յիսուս նորոգեաց նորք և զամնայն  
Ծնորհիւ քո լցան որդիք արամեան  
Ակա.

Զարին հալածիչ պարուղ սրբութեան  
Ջան մաքուր ոսկի լուսով աննման

ինչպէս թոռ-Քուչակի, այնպէս և նահապետի երդերը կրում են ժղ. և ժէ. զարերի կնիքը, թէ իրենց կազմութեան և թէ ինչպիսի լեզուով գրուելու նկատմամբ, Քուչակ նահապետը ապրելով ժղ. զարում և լինելով մի աշուղ երդիչ իրեն շրջապատով ժողովրդի մէջ, իր երդերն էլ զրում է հէնց ալդ ժողովրդի խօսակցական, աշխարհիկ լեզուով և ալս պատճառով նրա երգերի լեզուն ժղ. զարու աշխարհաբարն է գրաբարի գրաբարի հետ խառն. Նրա ոճը իր ժամանակի միւս երգիչների պէս պարզ է և սահուն: Լեզուի ընդհանուր բնաւորութեամբ նահապետի երգերը շատ նման են ժամանակակից միւս երգիչների երգերին: Նահապետի լեզուն պատկերաւոր է և նա ալդ պատկերները վերցնում է իրականութիւնից և ստեղծադրում երեսկալութեամբ: Նա նկարազրում է իր առաջազրած առարկան, բայց դրանով չբաւականանալով ուզում է լրացնել իր առարկայի նկարազրութիւնը և մի ալլ պատկերով. իսկ աբսուդ, իրօք, նա պատկեր չի վերցնում բնութիւնից, ալլ պատկերացնում է այն հետեանքը կամ աղդեցութիւնը, ինչ որ կարող է լառաջացնել իր առարկան

Ուաւաղ աղբեր ջուր անմահութեան

Մեղ.

Սերովբէ սէր սուրբ. վեր (ա) պետութան  
Տուն Յիսուս որդուն և բընակարան  
Բաբունի կուսէն մեղաց քաւարան

Մեղ.

Ցնծութիւն հրեշտակաց բերկրութիւն մարդկան  
'Իմւեալ ի լուսով մար ուրախութեան  
Փըտեալքս մեղօք քեւ առողջացան

Մեղ.

Դուլալ մեծագին ի հապաշաստան  
Եազութ և զմրութ և ալլ պատուական  
Ակատ լուսատու գանձ արքական

Մեղ.

Զքեղ միշտ կու գովեն խաթառիսութեան (?)  
Զըմուռ և ըզտաշն և ըզկասիան  
Եւ ալլ ծխելիք եազպետք սրբութեան

Մեղ.

Դու ես համասիւռ ծաղկանց ամիրայն  
Քաֆուր վարդ պայծառ հոտովդ բուրման  
Դու լուսին աշնան և արև զարնան

Մեղ.

իր շրջապատում, և ալդ հետեանքի կամ աղդեցութեան նկարագիրը իբրև պատկեր ծառալացնելով, աւելի զօրեղ կերպով կարողանում է արտապատել իւր գաղափարը: Նկարագրութեան ալս ձեւը ընտիր է: Օրինակ.

ԱԵկին ու բերին խապար  
Պիւլպիւլին թէ վարդն մեռաւ,  
Պիւլպիւլն ի վարդին սիրուն  
Սև ներկեց զշապիկն ու հազաւ.  
Շուտով մի բերին խաբար  
Պիւլպիւլին թէ՝ վարդն եկաւ:—  
Պատուեց զիւր սեռոկ շապկիկն,  
Խատուտիկ շուտով մի հագաւ» (33):  
Պատկերների կողմից նահապետի միտքը շատ արագ

Թէ զերկինքն ասեմ չէ ի քեզ նման  
Ժառանգողք դրախտին լօձէն խաբեցան  
Խաբօղքն նւազի քեզ ոչ մերձեցան

Մեղ.

Ի քեզ պարսպիալ բանն հայրական  
զԳաբրիէլ հրեշտակ եղեր պահապան  
Հեռացան ի քէն որդիք կորստեան

Մեղ.

Ցարգանդդ բաւեցեր դտէլն անբաւական  
Աչերտ է սովոր աստուածտեսութեան  
Կաթամբ սընուց (եր) զորդիդ աննման

Մեղ.

Ցոցդ և (էն) անմատուց խորանի նման  
Գիրկըդ սերովբէ կակ ի տարածման  
Միտք ոչ հասանեն քեզ անհասական

Մեղ.

Դրախտ լուսեղէն պլատուդ մաքրութեան  
Պըտղովդ ապրեցան որք անմահացան  
Պըտան առ ի քէն զիր աղատութեան

Մեղ.

Ընտրեալ ի լուսով լուս ընարողական  
Որ կաէ և մնայ անուն բաւիտեան  
Պառուզ աննակի և լովակիմակն

Մեղ.

Եւ աստ ով ոք կան, քեզնով զօրանան  
Անդ ըղքեղ կու օրհնեն վեզնով պանծանան:  
Եւ փառաւորեն զախարհս ամենակն:

Մեղ.

Ե՞ի ոչում և ալով վառ երեակալութիւնից յառաջանում է այն-  
որ երբ մի քանի առարկաներ իրար կետելից ուզում է նկա-  
րագրել և բոլոր առարկաներն էլ պատկերով ցոյց տալ,  
չի կարողանում ալդ պատկերները՝ լրիւ տալ և արագութեամբ  
մէկից միւսը անցնելով ընթերցողին կամ լուղին է թողնում  
իր երեակալութեամբ լրացնելու պատկերի ամբողջութիւնը:  
Քուչակ նահապետի լեզուն մի ալ յատկութիւն ևս ունի, այդ  
այն է, որ շատ է սիրում պատմական եղանակով գրել, Բայց  
և երբեմն լատնում է իր ցանկութիւնները կամ երանութիւն-  
ները և կամ նկարագրում է ներկայ եղանակով այն, ինչ որ  
այժմ իր հետ կատարուում է թէ իր ներքին աշխարհում և  
թէ դուրսը նահապետը իրը բանաստեղծ երգիչ ունի բանա-  
ստեղծական լեզու, Նա աշխատում է որքան կարելի է պատ-  
կերաւոր ձեռվ ներկայացնել երգած առարկան, ուստի և գործ  
է ածում իր ժամանակին լատուկ և հասկանալի բառեր՝ մակ-  
դիրներ, ածականներ և այլն, որոնց մեծ մասը արաբերէն ու  
պարսկերէն լինելով թէն ալժմ զժուարհասկանալի են դարձել,  
բայց ժամանակին ևնեցել են իրենց յատուկ գեղեցկութիւնը  
և գործածուած տեղին համեմատ նրբութիւնը: Դնենք ալստեղ  
նահապետի լեզուին յատուկ աչքի ընկնող բառերը իրենց  
բացարութեամբ<sup>1)</sup>:

Աջըդ քո փիսոն հնտու վալր իջման  
Ոհեակըդ դեհոն ի հապաշաստան  
Հայելըդ Տիգրիս և Եփրատ գնացման:  
Մեղ.

Աջըդ սուիծով, ահեակդ եզան  
Եւ դէմքըդ մարդու լուսով կազմութեան  
Գրկելիքդ արծիւ սաւառնաթեեան  
Մեղ.

Աջըդ ոհաննէս է վըկալութեան  
Ոհեակդ Մաթէսու է ճըշմարտութեան բան  
Մարկոս և Ղուկաս դիմացդ և թիկան:  
Մեղ.

Երբ քո միածինդ գատ ի դատաստան  
Ոնդը ժողովին աշխարհ ամենացն  
Պու բարեխօսեա վասն մարդկան փրկութեան:  
Մեղա.

Աշխարհս է նանիր ծաղիկին նըման  
1) Բառերի բացարութիւնը տուել է պ. Յ. Աճառեան:


Մուճառաթ—մուճառ—հարստութիւն, մուճառաթ  
=ակնեղէն (?)  
Մահալա—(արաբ.) թաղ, փողոց:  
Լուկ—ամեն, բոլոր.  
Տիլպէր—գեղեցիկ.  
Պատրուսեն—պատուաստուած ծառ.  
Շարշմաթ—շարչ (անհասկանալի), մաթ—քաղցու.  
Պէլթ—ոտանաւորի տուն  
Ժուկ—ու մուկ— ծուռ ու մուռ.  
Զուկակ—(արաբ.) փողոց.  
Քարամ—չորհ.  
Գէմ—հօ, խօ  
Վարօծ—(պրսկ.) վանեցոց բարբառով՝ վարչ-  
—տատրակ  
Պտրեխու—ժալու, ատամ.  
Խալին—(լունարէն) պղինձ, կաթսակ.  
Ղուսայ—հոգուու անձկալը, սիրու լողեր կամ զգաց-  
մունք առ հասարակ.  
Ցանդիմել—(պրսկ.) մտածել:  
Ցաջապ—զարսանալիք.  
Մթխալ—մխսալ.  
Կաֆաէ—տուն, զաֆաէ—գլուխ.  
Ճուհար—գոհար.  
Փխոր—? (անհասկանալի)  
Խատուտիկ—գոլնզգուն.  
Հաբեղանի—աբեղաք  
Մորմիկ—ծառի կանաչ ճիւղ.  
Ճիկէր—թոք  
Ցանկի—անկից, լանկարծակի (?)  
Հիւքմի—թագաւորի իշխանութիւն.

Որ ալս օրըն կատ վաղն ոչընչանան  
Եւ քե հեռանալ ի մէնջ սատանալու:  
Մեղ.  
Ես նուաստ քօչակ որ ասեն ի վան  
Չար մեղօք ելի և դատարկաբան  
Որդին եմ և փոշի և հող և անպիտան  
Մեղա քեզ մեղա կոյս անապական:

Քեօշալ—(պրսկ.) անկիւն.  
 Թարկիկ—?  
 Հարակ—դարման.  
 Շառափ—փալ.  
 Հանցքուն—այնպէս  
 Տալապ—(արաբ.) փափագ.  
 Վարձինակ—վարուժան, արու թռչուն.  
 Ակնատ—թակարդ.  
 Կասկամ—բռու.  
 Կանկանեմ—կանգնեմ, անկանիմ.  
 Թացան—ապուրի միջի փրթոշը.  
 Պելան—(արաբ.) փորձանք.  
 Բարկ—թէժ, խիստ.  
 Վարժ—ցանց.  
 Գրին—?  
 Աղբաթ—(արաբ.) վահճան  
 Խուժ—(թրք) աւաղ.  
 Զիմանիկ—?  
 Կթիսալ—բաժակ.  
 Նափաղալ—(արաբ.) պարէն  
 Զէնէնար—(պարա.) զզու  
 Խամազ (արաբ.) բամբասող  
 Պալատ—սիսալ.  
 Ի հտրաց—հեա իրերաց  
 Քեափիր—անողորմ, անհաւատ.  
 Հօք—վճիռ, իշխանութիւն (?)  
 Խլմէթ—զարդ.  
 Կտուած—նաշխած  
 Արմաղան—(աճկ.) նուէր.  
 Թապիհէ—զետեղել, լարդարել  
 Պատլել—տապալել.  
 Ճարակ մռնել—միջոց գտնել.  
 Ճաղան—(արաբ.) թռչուն ինչ, ցցունք, փետուր.  
 Թեղնիկ—թեհի ծալբերը.  
 Խիփ—ամօթ.  
 Նազար—չար աչք, նայուածք  
 Շլի—վիզ, պարանոց.  
 Փարուարիշ—պարարտ. ալ և (պարսկ.) սնունդ,

Պաքրի—?  
 Ալէմ—(արբ.) աշխարհ.  
 Շատր—լարդ.  
 Մուշկ—քաղցր հոտ ունեցող անասուն:  
 Լուրջ—կապոլտ  
 Ապիկ—շիշ, բաժակ.  
 Ճիւպակ—(արբ.) երկար վերաբկու  
 Անպարի—անուշահոտութիւն, անուշ ըմպելիք և  
 ալին.  
 Քուչակ նահապետի երգերի գեղարուեստական կազմու-  
 թեան կողմից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում  
 և այդ երգերի տաղափաչութիւնը: Հէնց իրենց, այդ երգերի,  
 մէջ լիշում է տաղաչափութեան այն տեսակի մասին որով  
 գուտած են նահապետի երգերը: Այդ չափի անունն է և ալ ե-  
 ր է ն: Ճնումը, (մինչեւ իսկ ալժմ էլ) հայ ժողովուրդը սովո-  
 րութիւն էր արել արդէն պատմական ինչ ինչ հանգամանք-  
 ների ազգեցութեան տակ իր երգերը թուրքերէն երգել: Բայց  
 երբեմն նա սիրել է իր միջից ծնած երգիչների՝ մալբենի լե-  
 զուով շինած երգերն ևս երգել, որոնց ձեր, կազմութեան  
 կամ ընդհանրապէս տաղաչափութեան ու բովանդակութեան  
 որպիսի լինելու պատճառով՝ տաճկերէն երգերից զանազա-  
 նելու համար և ալ եր է ն անունն են տուել: Առհասարակ  
 հաներէն երգերում երգուում են սիրու երգեր և այդ երեսում է  
 նաև Քուչափի հետեւալ խօսքերից՝  
 «Կու խմէ ու հակերէն կասէ  
 Թէ ինչ անուշ է սէրն ու գինին» (44).  
 Սովորի լիշատակութիւն կատ և Ակնալ երդերի մէջ  
 «Խմէ ուր ըսեմ անուշ  
 Անտունի մը ըսեմ ուշ է ուշ  
 Երը սիրողին վակել է  
 Ալ գինին անուշ խմողին» (ՀԱ. 438):  
 Ժամանակի ընթացքում հակերէն երգերի չափով երգեր  
 են կազմուում Ակնալ շրջակալքում, որոնք անտուն ի են  
 կոչուում, հաւանականաբար կամ Անտօն անունով մէկի պատ-  
 ճառով և կամ առանց աների գրուելու պատճառով, և ալդ  
 անունն էլ պահել են մինչեւ ալժմ: Նահապետի երգերի չափն  
 էլ, որ նոյն հակերէն երգերի չափն է, հետեւալ լատկութիւն-  
 ները ունի: Քուչափ նահապետի երգերը բաժանուում են տնե-

թի, իսկ աները անորոշ թուով տողերի. տներից մեծ մասը քառատող է, քիչ են պատահում հինգ, վեց և եօթն տողերով աներ. Սի տուն միայն երեք տող ունի: Հայերէն կամ անտունի երգերի տողերը բաղկացած են 7 կամ 8 վանկից՝ երեք ոտքով, կազմուած են եամբի և անապեստի խառնուրդից և լինում են լանգաւոր: Նոյնն են և Նահապետի երգերի տողերը: բայց ալստեղ տողերը կրկնած են. ալսինքն Նահապետի երգերի մի տողը, ախաէս ինչպէս բերուած է Հայերդի մէջ, համապատասխանում է հայերէնի կամ անտունու երկու տողին: Նահապետի երգերն էլ լանգաւոր են և ամեն մի տուն ունի առանձին լանգ: Առհասարակ որևէ տան տողերը նոյն լանգով ևն վերջանում և լանգերի նկատմամբ զուգահեռականութիւն կամ զրկախառնութիւն Նահապետը չի սիրում: Բայց երբեմն, թէե շատ սակաւ, պատառում է որ այս կամ այն տան մէջ տողերից մէկն ու մէկը վերջանում է բոլորովին ալլ լանգով քան ինչ որ ալդ տան միւս տողերն ունեն: Քուշակի երգերի շափի ընդհանուր սքեման ալս է՝



կամ՝ 3 2 3 =8

Բայց շատ տեղ ալս ընդհանուր օրէնքից շեղւում է երկրորդ, կամ շատ լաճախ առաջին տողը փոխանակ 7 կամ 8 վանկից լինելու, բաղկացած է լինում 9 կամ 10 վանկից և ստանում ենք կամ՝



լուկ մէկ մի ուշիկ ձայն է ած (43), կամ՝



թող զի՞նքըն մեռնի (33) կամ՝

Եկին ուբերին խարար

Քո սիրած եար (ը) զքեղ մոռացաւ (33) և ալին-

Ալս դէպքում անպատճառ ձեռագիրների արտագրութեան կամ բերնից բերան անցնելու ժամանակ փոփոխութեան է ենթարկուել երգը և մէկ կամ երկու վանկ աւելացել է իսկականին, որի հետևանքն է եղել և չափի խառնուելը: Օրինակ՝

«Հազեր գոյնզգոյն կապալ - 7  
կօճակ շարեր ու օղակն է կահաչ»—10  
և՝

«Խօշեարս ալ ի դէմս ելաւ—7  
Լուկ բարս երես հրվումաթով»—9

Ալստեղ աւելորդ է երկրորդ տողում շարեր, իսկ չորրորդում կամ երեսն է աւելորդ կամ հիւգումաթով քառի տեղ մի երկավանկ կամ եռավանկ բառ պիտի լիներ: Ընդհակառակն կանոնաւոր է՝

«Զինչ որ ես ինձ հետ արի  
— — — — —  
Զէր արեր ոչ ոք հարումի  
— — — — —  
Շիշակ մի հալած ոսկի  
— — — — —  
Ի գետին ի վար վաթեցի  
— — — — —

և մեծ մասամբ ալսպէս են կազմուած աները, սակայն շատ են և՝

— — — — — ովլ տողերը.

Օր. «Օրհնեալ է Աստուծոյ անունն  
Որ զբարեաց զռուինն է բացեր»:

բայց պատահում է և առդ ւր վանկերի թիւը վեց է և առջին ոտքը կազմուած է մի վանկից, օր.

— — — — —  
Իմ բարձրագնակ լուսին — 6

— — — — —  
Շատ բարե տուր իմ Կիւզէլին — 8,

թէե ալսպիսի դէպքում, մի ալլ տեղ, ալնպէս է դասաւորութառերը, որ կարելի է մի ձախաւոր աւելացնելով չափը տեղը բերելու օր.

Գհա (որ կարելի է կարդալ և զընա) ի վերակ թաղին  
 Բարձր պատ ու ծառն ի միջին  
 և աղն 6 (7)

և ալսակիսի շատ ու շատ տեղեր կան որոնցից երեսում է, որ  
 Քուչակ Նահապետի երդերը չափի կողմից մեծ փոփոխութիւն-  
 ներ կրել, կամ զուցէ հէնց ինքը Նահապետը չափի դորձա-  
 ծութեան մէջ մեծ աղատութիւն է տուել իբեն.

¶.

Նահապետի երդերի նմանութիւնը Վանայ ու Ակնայ ալժմեան ճողո-  
 վրդական երդերի հետ, և այդ նմանութեան հետեանքը:

Մօտաւորապէս արսակիսի չափով հն երգուում և ալժմեան  
 Վանայ ու Ակնայ շրջակալքի ժողովրդական երդերից շատե-  
 րը, և նմանութիւնը Նահապետի երդերի ու ալդ ժողովրդա-  
 կան երդերի մէջ թէ չափի և թէ բավանդակութեան կողմից  
 շատ մեծ է: Արդ՝ բնչպէս բացատրել ալդ նմանութիւնը: Սա-  
 կան նախ քան ալդ նմանութիւնները բնրելը և բացատրե-  
 լը տեսնենք թէ ովքեր են Ակնեցիք, որովհետեւ Վանը և Վաս-  
 պուրականը արդէն լաւանի են մեզ:

ԺԱ. գարուա Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի հալոց  
 թագաւորը տեսնելով թաթարաց լարձակումը Հայաստանի վրայ  
 և զդալով իրեն հասանելիք մօտալուս վատանգը, Վասպուրա-  
 կանը լանձնեց Վասիլ կալսեր և արքունիքով ու զօրքով Սե-  
 բասաթիա գալթեց: Թագաւորին հետեւեցին և երկրի ժողովրդից  
 մօտ 400,000 հայեր, որոնց մի մասը լետով Սենեքերիմի իշ-  
 խանների հետ Սեբաստիան թողնելով եկաւ ու Սիրաափ ափին  
 Ակն ու Արարեկը քաղաքները հիմնեց<sup>1)</sup>, ուր նախ քան Հալոց  
 գալը շատ քիչ թուով թափառական լոյներ էին ապրում միայն,  
 որոնք կարծ ժամանակում ծուլուեցան Հալոց հետ: Սական  
 ալժմեան Ակնայ ժողովուրդը աւանդութեամբ միան, իրեն  
 Անիից գաղթած է համարում, որի համար հաստատուն փաստ  
 պակասում է: Սինչդեռ Վանից գաղթելու իրողութեան հա-

մար մի փաստ էլ աւելանում է այն հանդամանքը, որ ՀՀ  
 ինժինեան իր «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»-ի  
 մէջ լիշում է՝ թէ Ակնայ զիւղերից մէկի անունն էլ ալան  
 գեղը է կոչուում: Ուրեմն Վասպուրականի ժողովուրդը զաղթե-  
 լով հաստատուեցաւ Ակնայ շրջակալքում, հարկաւ, տանելով իր  
 հետ իր աղջակին սովորութիւնները և ժողովրդական խաղերն ու  
 երգերը. մենք ունենք Ակնայ ու Վասպուրականի կամ Վանայ  
 ալժմեան հայ ժողովրդական երգերը, որոնք Քուչակ Նահապե-  
 տի երգերի հետ համեմատելով, երկուսի միջն մեծ նմանու-  
 թիւն ենք գտնում: Համեմատենք ալդ նման կէսերը և նմա-  
 թիւն ենք գտնում: Համեմատենք ալդ նման կըսել թէ որ-  
 շափի առընչութիւնն են ունեցել իրար հետ: Նախ համեմատենք  
 չափը տեսնելուց լետով աշխատենք որոշել թէ որ-  
 շափի առընչութիւնն են ունեցել իրար հետ: Նախ համեմատենք  
 պատշաճ Նահապետի երգերը Ակնայ ալժմեան երգերի հետ, ա-  
 պա նունը կիրորձենք և Վանայ ալժմեան ժողովրդական եր-  
 գերի հետ: Այսպէս օր.

## ՔՈՒՉԱԿԻ ՆԱՀԱՊԵՏԸ

## ԱԿՆԱՅ ԵՐԴԵՐԻ.

Վու ով ես որ լերդիկդ ես ելեր. Ատ ով ատ երդիքտ եկեր,  
 Զալդ օտար հողդ կու կոխես,  
 Թէ վարդ ես նէ վար եկու,  
 Թէ օտար ծաղիկ նա զնա.  
 Ոչ վարդ եմ ի վար գալու,  
 Ու ոչ օտար ծաղիկ զնալու,

Եկեր սիրուդ եմ ասեր,  
 Ոչ գալու եմ և ոչ գնալու:  
 Տեկանց «Հայերդ» եր. 30.

Ու ով ատ երդիքտ եկեր,  
 Ու ով ատ երդիքտ եկեր,  
 Ետ երում ունեմ զնալու:  
 Յ. Ճանիկեան «Հնութիւնք  
 Ակնայ» եր. 443

Այս երկու երգերի նմանութիւնը ակների է, տարբերու-  
 թիւն նկատում է չափի մէջ, Քուչակի երգի տողերը մէկ կամ  
 երկու վանկով աւելի է միւսից: Վեցցնենք ալդ տեսակ: Քու-  
 չակի երգերում երբեմն մի կամ երկու տող, որ զիալզի ձև  
 ունեցող տեղերում բաւական արտակատիչ բնաւորութիւն ու-  
 նի, իր նմանը ունենում է և Ակնայ երգերի մէջ կրկին զիա-  
 լզի ձև ունեցող տեղերում և աչքի ընկնող դարձուածնե-  
 րում. օր.

## ՔՈՒՉԱԿԻ.

## ԱՅ. ԵՐ.

<sup>1)</sup> Զամեան, Պատմութիւն Հայոց. հար. Բ. գիրք 14<sup>o</sup>  
 գլ. 1, երես 902—3.

Իմ բարձրագնայ լուսին

Լուսիկ, դուն կամաց կամաց..

Նատ բարեւ տուր իմ կիւզէ-  
լին.  
— Զբարեղ եսի ուր տանեմ  
Չեմ գիտեր զտունն կիւզէ-  
լին.  
— Դնա ի վերալ թաղին,  
Քարձրպատ ու ծառն ի մի-  
ջին,  
Նստեր ի ծառին չքին,  
Կիմէ ի լուրջ ապիլին,  
ՏՀ. 44.

Նոյնպէս և հետեւալ կտորը՝  
ՔՈՒԶԱԿ

ԱԿ. ԵԲ.

Զաւախն ու ափին ունի  
Ոչ խմէ, ոչ տալ խմելու.  
ՏՀ. 42

Խատէն ուր ափիտ ունիս  
Կամ խմէ կամ տուր խմողին,  
ՀԱ. 440.

Քուչակի ալս տողերից լետոյ գալիս են չօրս ալլ տող,  
ուր լիշում է հաւերէն երգերի մասին, ալդ տողերը իրենց  
նմանը ունին Ակնալ երգերում, ուր հաւերէն ի փոխարէն  
անտուն ի անունն է լիշում.

## ՔՈՒԶԱԿ

ԱԿ. ԵԲ.

Նստեր է ծառի չքին,  
Կիմէ զիւր լուրջ ապիկին.  
Կիմէ ու հաւերէն կասէ  
Թէ ինչ անուշ է ուշըն ու գինին,  
ՏՀ. 28 և 44

Խատեր է ծառին չքին  
Խատու մատիստէն ի ափին.  
Խմէ ուր ըսկմ անուշ  
Անտունի մըսկմ ուշ է ուշ:  
ՀԱ. 438 և 440

## ՔՈՒԶԱԿ

ԱԿ. ԵԲ.

Վերի փողոցովդ ի վար կուզի  
Ճուկ ու մուկ հաղարզուկակով,  
Խօշեարս ալ ի դէմս ելաւ,  
Լուկը արե երես հիւգումաթով  
Զիր աչերն խիստ կարօտով,  
Կերթար ու լալով կասէր  
Թէ ինչք խաղք էր եղանք ցո-  
րեկով, Լացաւ ու լալով ըստաւ,  
Բոնեցիր զորով ճորով,  
Պազ մ' առիր հազար նազերով:  
ՀԱ. 446 և 453

Ան զանկտեմ դուն ալվա դնամ:  
Գնա խարիպիս ըսէ.  
Զի կենալ, թող ելլէ ու դագ.  
Բարեղ ի գլխուս վրայ,  
Զի գիտեմ դուռը խարիպիտ:  
Եկուր նշանով ցոյց տամն  
Բարձր պատ ու ծառ չքերուն:  
Նստեր ի ծառին չքին  
Խատ ու մատիստէն ի ափին:  
ՀԱ. 440.

Աւելի սերտ նմանութիւն երեւմ է հետեւալ երկու  
Չրինակների մէջ.

## ՔՈՒԶԱԿ

ԱԿ. ԵԲ.

Զկնակն ի ջրէն հանուի,  
Զուր մալ ձգեն նա ապրի.  
Հանցուն եմ ի քո սիրուդ,  
Զինչ ձկնակն որ թալէ թլի  
Զձուկն ի ջրէն հանեն  
Նա տըտան տայ ու մեռանի  
Երբ զիս իմ եարէն դատեն,  
Մեռնիմ ու ալլ ճար մի լլնի:

ՏՀ. 41

Զկնակ մ'ուր ջրէն դատես,  
Զուր մին ալ ձգեսնը չապրիր:

ՀԱ. 487

## ՔՈՒԶԱԿ

ԱԿ. ԵԲ.

Ակ ծովական գիշերս ի բուն  
Ես երկու շրջան մանեցի.  
Խօշեարս ալլ ի միտս ընկաւ՝  
Թէզմ ելայ զջահրաս վերուցի,  
Փարչիկմ ալլ անուշ զինի,  
Սոկ մելայ ջան կործեցի.  
Առի խօշեարիս գուռն դնացի,  
Դցի (գնացի) իմ եարին գուռը,  
Խօշեարամ զդուռն բաց,  
Զին եկեր ոտվիս կու մըսի:

ՏՀ. 27

ՀԱ. 451

## ՔՈՒԶԱԿ

ԱԿ. ԵԲ.

Զիմ եարն էմանէթ կուտամ  
Ի վարդին մէջ պահեցէք.

ՏՀ. 30

Ծաղիկ մ'ամանէթ կու տամ  
Վարդերուն մէջը պահեցէք:

ՀԱ. 436

Քուչակի երգերի և Ակնալ երգերի միջև ալսպիսի նմա-  
նութիւններ շատ ու շատ կան: Զուր տեղը մեր գրութիւնը  
չերկարացնելու համար բաց ենք թողնում ալսպիսի նմանու-  
թիւններից հէնց ալժմ արդէն մեր ձեռքը եղած մօտ 25 կտոր,  
բաւականանալով ալսքանով:

Քիչ չեն նաև Քուչակի երգերի և Վանալ ժողովրդական  
Երգերի միջև եղած նմանութիւնները: Ակսենք որ և է տեղից:

## ՔՈՒԶԱԿ

Գիշերս ես ի գուրս ելակ, Գիշեր տիւս էլա,  
Թէ եար մի զանում սիրելու Թուխ ամպը անուշ կցօղեր,  
Գրողն ալ ի դէմս ելաւ, Զարկամ դէմ առեց  
Լուկ նազար արաւ տանելու. Սրտիկս խորովեց.  
Գիշերս ես ի քուն էի, Ասաց դեռ կերթաս,  
Քունս ի ներս սրտիկս երեցաւ, Քոյ եար մեռերի:  
Եկին ու բերին խապար.

Քո սիրած եարն զքնել մոռա-  
ցաւ

§Հ 42 և 33

Հետեւեալ կտորի մէջ ալդ նմանութիւնը աւելի սերտ է  
երեւմ թէ բովանդակութեան և թէ դարձուած քների կողմից.

## ՔՈՒԶԱԿ

## ՎԱՆԱՅ ԵՐ.

Մալրիկն անիծեց զորդին՝ Մարդ որ մարդու կանիծի,  
Իմ որդի դուն զարիպանաս. Թող ասի՝ կարիբանաս.  
Երթաս ի լոտար երկիր, Սար քել սնար էլնի,  
Զղարիպին զատըն գիտենաս. Աւազի մէջ թիւլանաս:  
Զքարն սնարք առնես, Թէ քեռ աշխարհ լիշես  
Ի վերալ աւազին քնանաս, Ողջ անձով էլնես ցաւազին.  
Վաղինէ քնէն վեր ելնես,  
Քան զԱսուած ալ ճար չու-  
նենաս:

§Հ 42—43

Ե. Վ.—Ս. 52

Քիչ նմանութիւն չեն ներկալացնում և հետեւեալ կտոր-  
ները.

## ՔՈՒԶԱԿ

## ՎԱՆԱՅ ԵՐ.

Իմ եար բարձրագնակ լուսին, Լիւսին, տիւ պանցրիկ լիւսին,  
Ցուր երթաս զիշերդ անհուն. Որ կպիւրես մէջ տանխինդին  
Շատ լիրդիք ի վար հափս, Շատ տուն կմտնես, շատ քեօշկ  
Կու տեսնես շատ կիւղելի քուն:

§Հ 44

կամ՝

## ՔՈՒԶԱԿ

## ՎԱՆԱՅ ԵՐ.

Երկու եարուկ զիս կուզէ Ես իրելք աէկեկերին տեսաւ

Զդիտեմ թէ որն է սիրուն, Ինոնց սիրուն հէքմաթ մնացի  
Մէկն ցերեկուան արկ, ինչ էն ձեռչն էր, արեղական  
Մէկն լուսին մութն զիշերուն նման,  
Լուսին, չեմ սիրեր զքեզ ինչ կէս օր կամար կ'կապի:  
Դուն սովոր ես խոր կենալուն ինչ էն միժնէկն էր, լիւսին  
Երթամ զարեղակն սիրեմ էր նման,  
Որ ծագէ լուսն առաւօտուն, Որ տանխինդին կը բզրի:  
Ինչ էն պստիկն էր լիւս աստղի նման.

ՏՀ. 43 Որ առաւտման կեախին կը ծաղկի:  
Ե. Վ.—Ս. 52

Մի ուրիշ օրինակ ես, ուր ալսովիսի նմանութիւն աւելի  
մեծ չափով կալ.

## ՔՈՒԶԱԿ

## ՎԱՆԱՅ ԵՐ.

Իմ եար զուն լիրդիկն ի քուն, Մեր իգիկն զիմաց ձեր իգիւն,  
Ծոցդ լուս տաքր աստղերուն. Քիւն կամազ մարդու զլիխուն.

## ՔՈՒԶԱԿ

## ՎԱՆԱՅ ԵՐ.

Կամ մա զիս ի ծոցդ ի քուն, Ես զիս առ քեռ ծոցիկ անեմ  
Կամ տէսթուր տուր երթամ ի անուշ քիւն,  
— Ոչ կառնում ի ծոցս ի քուն. առոր տուն:  
Ոչ տէսթուր տամ երթամ ի — Ոչ քէկ կառնիմ իմ ծոց, ա-  
տուն. Ես զաստուր տուր, Երթամ իմ  
Հանցեղ երերուն պահեմ, Ոչ զաստուր կուտամ էրթաս  
Մինչոր գուլ լուսն առաւօտուն: Քեռ խօր տուն:  
Քեռ անչափ կը պախեմ սօխում էրէրում:

Չիւմ կեալ լեռս առաւըտուն:  
ՏՀ. 43 Ե. Վ.—Ս. 50 - 51

և ալն, և ալն . . . . Ալժմ՝ դառնանք մեր խնդրին.  
— Բնչ են ասում մեղ ալս նմանութիւնները:

Բերած օրինակներից տեսնում է ինքնին, թէ որ աստի-  
ճանի մեծ է քուչակ նահապետի երգերի և Ակնակ ու Վանաք  
այժմեան ժողովրդական երգերի միջն եղած նմանութիւնը  
Հետեւապէս պէտք է յակամալից խոստովանել, որ Քուչակի  
երգերը որ և է ներքին առընչութիւն ունեն ալդ երկու տե-

ղերի երգերի հետ. Մենք տեսանք մի քիչ առաջ, որ Ակնեցիք նոյն Վանի ժողովուրդն են, միայն զաղթած ԺԱ. դարում: Միւս կողմից դիտենք որ Քուչակ Նահապետը հանդէս է եկել ԺԶ. դարում, Վանում: Ուրեմն Ակնեցոց դաղթը առնուաղն 500 տարի առաջ է եղել Քուչակի երեան զալուց: Նոյնպէս համեմատութեան համար բերած օրինակներից տեսնել կարելի է, թէ որքան սերտ նմանութիւն ունեն Ակնալ և Վանակ այժմեան ժողովրդական երգերը միմեանց հետ<sup>1)</sup>, որոնց երկուսին, փոխադարձաբար, նմանում էր և Քուչակի երգերը: Եթէ ընդունենք, թէ Քուչակի երգերը ինքնուրովն են եղել և նորա երգելոց լետոյ շարունակ երգուել է ժողովրդի մէջ, իրենց ժողովրդական բնաւորութիւն ունենալուն համար, ու ալսպիտով դոցանից է կազմուել Վանի այժմեան ժողովրդական երգերը, — այս ժամանակ ինչպէս բացատրենք Ակնալ երգերի և Քուչակի երգերի առընչութիւնը: Դժուար թէ զաղթական Ակնեցիք, իրենց դաղթից լետոյ, մինչև ԺԶ դար, և ԺԶ դարից լետոյ էլ մի-երկու զար այս կողմը, այնպիսի մի մեծ, համարնական, շփումն ունեցած լինին Վանակ ժողովրդի հետ, որ լետոյ կրկին Ակն տեղափոխուելով, այդ ժամանակում միջոց ունենալին վերցնել Վանակ ժողովրդից նոցա՝ Քուչակից ժողովրդին անցած՝ ժողովրդական երգերը և Ակն տանել կարողանալին, մանաւանդ որ Հայաստանի վիճակը ԺԱ. — ԺԶ. դար շատ էլ բարուք չէր: Ակնեցոց դաղթից լետոյ Տուղրիւ, Ալիփասլան և Մելիքշահ իրենց հրոսակներով Հուլաստան թափուեցան հէնց նոյն ԺԱ. դարում: ԺԱ. դարում դոցա դործը շարունակել սկսեցին թաթարները Զարմաղանի առաջնորդութեամբ, ԺԱ. և ԺԲ. դարերում Լանկթամուրի արշաւանքն էր և այդ արշաւանքին հետեւ մաֆր մունր կռիւները ամեն աեղ, ԺԱ. դարում Յսմանցիք երեսում են և նորից կրակ դառնում Հայոց գլխին, վերջապէս ԺԶ. դարում Շահաբասի սարսափելի արարքներն են կատարուում: — Իսկ ԺԶ. դարից մինչև ԺԸ. դարից վերջներու կատարուում են կարճ ընդմիջումներով Պարդարի վերջները կատարուում են կարճ ընդմիջումներով:

<sup>1)</sup> Իմ այս գրութիւնը արդէն պատրաստ էր, երբ իմ ծանօթներից մէկը, պատահմամբ միայն, լայտնեց իւն, թէ «Բիւրակնի» հին համարներում բաւական երկար կերպով ցոլց է տրուած Ակնալ և Վանակ ժող. երգերի նմանութիւնները միմեանց հետ: Դժբաղդաբար, ոչ մի կերպ չկարողացանք ձեռք բերել «Բիւրակնի» այդ համարները:

սից և Օսմանցոց երկարատե պատերազմները: — Հետեապէս, Ակնալ և Վանակ ժողովրդական երգերի նմանութեան, շատանգամ գրեթէ բառացի լինելու պատճառը Քուչակի երգերի հետ, այտք է ԺԱ. դարից առաջ վնտուել: Իսկ այդ պատճառը այն է, որ Ակնեցիք նոյն Վանակ ժողովրդը լինելով իրենց զաղթի ժամանակ մալր-հալրենիքից տարել են իրենց հետ և իրենց ժողովրդական երգերը և առանձին կերպով զարդացնելով, հասցրել մինչև մեր օրերը, հարկաւ փոփոխելով, բայց և միշտ էականը նոյնը պահելով: Իսկ թէ կարելի րան է ԺԱ. դարից մինչև այժմ այդ երգերի գոլութիւն ունենալու հնարաւորութիւնը, իբրև ապացուց և օրինակ թող ծառակէ մեր ժողովրդական Սասման ծառ ծառ կամ Գաւակի թւ եւ Մհեր անունով լաւտնի զիւցազնական վէպը, որ իր սկիզբը առնում է՝ կամ Յ, դարից Քրիստոսից առաջ, երբ Հայաստան են դաղթում Աղբամելիք և Սանասար, կամ Յ, դարից Քրիստոսից լետոյ, երբ Աստուածաշունչը մեզնում հալերէնի թարգմանուեցաւ<sup>1)</sup>: Ակնալ և Վանակ ժողովրդական երգերի առընչութիւնը ալսպիչ զնելուց պէտք է ընդունենք ուրեմն, որ այդ երգերը մինչև ԺԶ. դար, այն է՝ մինչև Քուչակի երեան դալը, արդէն կալին ժողովրդի մէջ և Նահապետը իբրև աշուղ թափառելով Վանակ շրջակալքում հաւաքել է այդ ժողովրդական երգերը և զրի է անցրել իր ինքնուրովն երգերի հետ միասին: Գոնէ ալսպէս կարող ենք ասել Նահապետի երգերի այն կտորների համար, որոնց նմանութիւնը այժմեան ժողովրդական երգերի հետ ակներն է: Իսկ Նահապետի երգերի միւս մասերը՝ խրատական, կրօնական բովանդակութիւն ունեցողներ՝ կարելի է զուտ ինքնուրովն համարել, ինչպէս որ ժամանակակից միւս երգիչները ունեն: Յւ թէ այդ միւս երգիչներն ես իրենց սիրու երգերում ժողովրդական մօսիւ մայնում են, բայց ոչ այն չափով և այնպէս, ինչ չափով և ինչպէս որ այդ՝ Քուչակի երգերում է տեսնուում: Ալսպէս ուրեմն Քուչակ նահապետի սիրու երգերի միծ մասը իր ժամանակի ժողովրդական երգերն են, որոց նա հաւաքել է:

<sup>1)</sup> Ուր և (Գ. թագ. ԺԹ. 37, և Ես. մրգ. Լի 38) պատմուած է երկու եղբայրների իրենց հօրը սպանելու և Հայաստան փախչելու պատմութիւնը, որ այժմեան վէպի էական կետերից մէկն է և գտնուում է, զրեթէ, բոլոր վարիանտներում: Տիս նաև «Աբարատ» 1901 թ. Երևան՝ 252—254.

Յամենալն դէպս, Քուչակ նահապետի երգերը հանդիսանում են իբրև մեր միջնադարեան բանաստեղծութեան ամենազեղեցիկ կտորներից մէկը և թերևս աւելի բարձրանալ նոցա վարկը եթէ կարելի լինի վերականգնել նոցա սկզբնական ձեր, մանաւանդ եթէ գտնուեն և խմբագրուեն Նահապետի միւս՝ մեր ձեռքը չասած երգերը, Նահապետի երգերում գործածուած գեղեցիկ պատկերների ահազին քանակութիւնը, զեղարուեստական նորբ և ընտիր ձեերի շատ օրինակները և բանաստեղծի վառ երեակալութիւնը ահազին նիւթ կարող են տալ ամեն մի բանաստեղծի մանաւանդ այժմեան մեր հայ բանաստեղծներին. Թող հետաքրքրուին մեր բանաստեղծները Քուչակի ալդ երգերով, թող ուսումնասիրեն Նահապետի երգերի առանձնակատուկ տաղաչափութիւնը, որ նոցա գրեթէ բոլորովին անծանօթ է,—և նորա կտեսնեն, որ մինոր, գեղեցիկ չափի հետ միասին կալ և զգացմունքների մի ալ աշխարհ, երեակալութեան մի նոր մթնոլորտ:

ՅՈՎԱՀԱՆՆԵՍ ԹԱԿԱՌՈՍԵԱՆ

բանացի շնորհ առաջակած կազմութեակաց հարցուս  
ու և ի բար մը պահապահ յառաջակած թագու ուն  
սականի հարցուս ու և ի բար առաջ պարագան առ  
գու առիլ ու ի առիլ մը յառաջ առաջ պահապահ  
ու և ի բար առաջ առաջ կազմութեակաց կազմութեակաց  
ու գրեթե զանգերութեակաց կազմութեակաց առ  
պահապահ առաջ և պար առիլ ու գրեթե զանգերութեակաց  
ու առաջ առաջ պահապահ առաջ առաջ պահապահ առ  
պահապահ առաջ առաջ պահապահ առ առաջ պահապահ  
ու գրեթե զանգերութեակաց կազմութեակաց առ  
պահապահ առաջ առաջ պահապահ առ առաջ պահապահ  
ու գրեթե զանգերութեակաց կազմութեակաց առ  
պահապահ առ առաջ պահապահ առ առաջ պահապահ

առաջ պահապահ առ առաջ պահապահ

ՀՀ Ազգային գրադարան



NL0371891

65

